ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 29-Լ

«31» 03 2023 թ.Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով՝ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության (այսուհետ՝ վարչական շրջանների դատախազություն) դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և նույն վարչական շրջանների դատախազի տեղակալի 1 հաստիք ավելացնելու, վարչական շրջանների դատախազության դատախազի 1 հաստիքը կրճատելու և վարչական շրջանների դատախազության ավագ դատախազի 1 հաստիք ավելացնելու, Արմավիրի մարզի դատախազության (այսուհետ՝ մարզի դատախազություն) դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և նույն մարզի դատախազի տեղակալի 1 հաստիք ավելացնելու, մարզի դատախազության դատախազի 1 հաստիքը կրճատելու և մարզի դատախազության ավագ դատախազի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանի 1-ին հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 3-րդ բաժնի 21-րդ գլխում «Դատախազի տեղակալ 2» բառերը փոխարինել

«Դատախազ տեղակալ 3», «Դատախազության ավագ դատախազ 6» բառերը՝ «Դատախազության ավագ դատախազ 7», իսկ «Դատախազության դատախազ 10» բառերը՝ «Դատախազության դատախազ 8» բառերով.

2. Հավելվածի 4-րդ բաժնի 26-րդ գլխում «Դատախազի տեղակալ 2» բառերը փոխարինել «Դատախազ տեղակալ 3», «Դատախազության ավագ դատախազ 3» բառերը՝ «Դատախազության ավագ դատախազ 4», իսկ «Դատախազության դատախազ 9» բառերը՝ «Դատախազության դատախազ 7» բառերով.

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին ու դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ